

**ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր,  
ՀՀ Նախագահի աշխատակազմին առընթեր Ազգային  
անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական,  
տնտեսագիտության թեկնածու*

**ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՍՊԱՌՆԱԼԻՔ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Կոռուպցիան այսօր դարձել է ազգային և միջազգային անվտանգության սպառնալիք, ինչն էլ պայմանավորում է կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության գիտակցումը:

Այստեղ շատ է կարևորվում կոռուպցիոն երևույթների մշտական ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ որպես հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրագործման երաշխիք: Կոռուպցիոն ռիսկերով պայմանավորված սպառնալիքների անընդհատ աճի պայմաններում կարևոր է կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկել որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ:

**Հիմնաբառեր.** կոռուպցիա, հակակոռուպցիոն քաղաքականություն, ազգային անվտանգություն, ազգային անվտանգության սպառնալիք, կոռուպցիոն ռիսկ:

Կոռուպցիան այսօր դարձել է ազգային և միջազգային անվտանգության լրջագույն սպառնալիք: Այստեղ առանձնակի կարևորվում է կոռուպցիայի ճիշտ ընկալման և դրա դեմ պայքարի կարևորության գիտակցման խնդիրը:

**Կոռուպցիոն երևույթների դրսևորումները և դրանց  
պատճառահետևանքային կապերը**

Համաձայն Web of Science-ի աղբյուրների կոռուպցիան քննարկվել է դեռևս 1898 թվականից (Social Sciences Citation Index, SSCI): Այն նոր շեշտադրումներ է ձեռք բերել 1975 (Arts & Humanities Citation Index, A&HCI) և 1990 (Conference Proceedings Citation Index- Social Science and Humanities, CPCI-SSH) թվականներին: Դեռևս 1904թ. Հենրի Ֆորդն իր «Մունիցիպալ կոռուպցիան» աշխատությունում առաջին անգամ բարձրեցնում է քաղաքական կոռուպցիայի հարցը [10, էջ 673-686]: Հետագայում, տնտեսական ակտիվացմանը զուգահեռ, ամերիկյան իշխանական

կառույցներում ի հայտ եկած ոչ օրինական բիզնեսի և կաշառակերության երևույթներին լուրջ անդրադարձ է կատարում Ռոբերտ Բրուկսն իր «Կոռուպցիան ամերիկյան քաղաքականությունում և կյանքում» աշխատությունում [9, Շ. 65]: Կոռուպցիոն երևույթների ծավալման նոր դրսևորումներին է անդրադառնում նաև Գ.Գ. Վիլսոնը, իր «Կոնգրես. կոռուպցիա և փոխզիջում» մենագրությունում [13, էջ 169]: Կոռուպցիան բավական բուռն քննարկաման առարկա է դառնում անցյալ դարի 70-ականներին՝ պայմանավորված այդ երևույթի լայն ծավալմամբ և նոր դրսևորումներով: Պետությունը շարունակելով դիտարկվել որպես քաղաքական կոռուպցիայի հիմնական հարթակ, աստիճանաբար անցում է կատարվում դեպի տնտեսական հենք: 90-ականներին կոռուպցիայի տնտեսական մեկնաբանությունները դառնում են գերիշխող [11, էջ 399-457], [12, էջ 77-114], [14, էջ 1-11]:

Կոռուպցիան համարվում է նաև սոցիալական երևույթ: Ժամանակակից պայմաններում, կոռուպցիան որպես կառավարման համակարգի բաղկացուցիչ, սերտորեն փոխկապակցված է քաղաքական, տնտեսական, մշակույթային և այլ համակարգերի հետ, ինչն էլ պայմանավորում է կոռուպցիոն երևույթների և դրանց հետևանքների փոխազդեցությունը (տե՛ս **Աղյուսակ 1**):

Ամփոփելով կոռուպցիոն դրսևորումների փոխկապակցության և փոխազդեցության այս դիտարկումը, կարելի է ամենաընդհանրական ձևով կոռուպցիան բնորոշել որպես՝ օրենքի գերակայության սկզբունքի խախտման պայմաններում քաղաքական ու տնտեսական կայունության, և, հետևաբար նաև, սոցիալական միասնության խաթարում և հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակույթային ու բարոյա-հոգեբանական բազմակողմ հարաբերությունների «համակարգային աղճատում ու ձևախեղում»: Այս ամենը լուրջ վտանգ է ցանկացած երկրի ազգային անվտանգությանը: Սա նշանակում է, որ կոռուպցիայի դեմ պետք է տանել անողորք և հետևողական պայքար:

**Աղյուսակ 1**

**Կոռուպցիոն դրսևորումները և հետևանքները**

Կոռուպցիայի տեսակները	Կոռուպցիայի բնորոշիչները	Կոռուպցիայի հետևանքները
<b>Մշակութային</b>	Կոռուպցիան որպես մշակութային երևույթ	աշխարհայացքային և մտածողական անբարենպաստ փոփոխություններ
<b>Գաղափարախոսական</b>	Պետական պաշտոնյայի ու նրա միջավայրի շահերի գերադասում՝ ազգային շահին	նյութական, բարոյական կորուստներ՝ ի օգուտ առանձին անհատների
<b>Քաղաքական</b>	Կոռուպցիան որպես իշխանության համար պայքարի և հարստացման միջոց	<ul style="list-style-type: none"> <li>• իշխանական բոլոր մակարդակներում հարաբերությունների ձևախեղում, երկրի շահերի խաթարում,</li> <li>• հասարակությունից իշխանության օտարում,</li> <li>• երկրի վարկի անկում</li> </ul>
<b>Տնտեսական</b>	Տնտեսության ստվերայնացում	<ul style="list-style-type: none"> <li>• ստվերային տնտեսության ինստիտուցիոնալացում,</li> <li>• հարկային մուտքերի նվազում, սոցիալական խնդիրների սրում,</li> <li>• տնտեսության ոչ արդար մրցակցություն,</li> <li>• անբարենպաստ ներդրումային միջավայր</li> </ul>
<b>Սոցիալական</b>	Սոցիալական խմբերի միջև հարաբերությունների աղճատում	<ul style="list-style-type: none"> <li>• եկամուտների ոչ արդար վերաբաշխում և սոցիալական շերտավորում,</li> <li>• սոցիալական լարվածության աճ</li> <li>• տնտեսական և քաղաքական կայունության նվազում:</li> </ul>
<b>Հոգեբանական</b>	Կոռուպցիոն վարքագծի արմատակալում	<ul style="list-style-type: none"> <li>• անհատի և հասարակության վարքագծի ձևախեղում՝ ի խթան կոռուպցիոն դրսևորումների</li> </ul>
<b>Կենցաղային</b>	Կենցաղային մակարդակում պարտադրված «տնտեսական ծախս»	կենցաղային ծախսերի հավելում:

\*Մշակումները կատարվել են հողվածի հեղինակի կողմից:

**Կոռուպցիոն իրավիճակը և հակակոռուպցիոն քաղաքականությունն ազգային անվտանգության համատեքստում. միջազգային փորձը**

Կոռուպցիան այսօր էլ աշխարհում շարունակում է մնալ բարձր մակարդի վրա: Չնայած դեռևս ոչ մի երկիր չի կարողացել ազատվել կոռուպցիայից, այնուամենայնիվ որոշ երկրներ կարողացել են էականորեն նվազեցնել կոռուպցիայի մակարդակը: Համաձայն կոռուպցիայի վերաբերյալ միջազգային գնահատականների (տե՛ս **Աղյուսակ 2**), հետազոտության առարկա հանդիսացող 153 երկրների շարքում կոռուպցիայի ցածր մակարդակով առաջին տասնյակում են գտնվում Դանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Նոր Զելանդիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Շվեյցարիան, Սինգապուրը, Կանադան, Գերմանիան, Լյուքսեմբուրգը և Միացյալ Թագավորությունը: Կոռուպցիայի բարձր մակարդակով առանձնապես աչքի են ընկնում Ադրբեջանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը, Իրանը և այլն:

Համաձայն այս գնահատումների, Հայաստանում կոռուպցիան՝ համեմատած տարածաշրջանային երկրների հետ, գտնվում է հարաբերական բարվոք վիճակում՝ 153 երկրների շարքում զբաղեցնելով 95-րդ տեղը:

Ուսումնասիրելով աղյուսակում բերված դիրքային գնահատականները, կարելի է ասել, որ բոլոր բարձր դիրքերում գտնվող երկրներն ունեն բարձր կենսամակարդակ, որոնք իրականացնում են արտահայտված սոցիալական քաղաքականություն (սրանք հիմնականում եվրոպական, մասնավորապես Սկանդինավյան երկրներն են): Պետք է նշել, որ այս երկրներում հակակոռուպցիոն միջոցառումները կրում են բավական մեղմ՝ դեմոկրատական բնույթ, որտեղ մեծ ներուժ և իրական հնարավորություն ունի հասարակական հսկողությունը: Ավելին, համաձայն Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի [5], որին միացել են այդ երկրները, հասարակությունն իրավունք ունի իրականացնել իրավական ակտերի անկախ հակակոռուպցիոն փորձաքննություն: Այստեղ մեծ է նաև զանգվածային տեղեկատվական միջոցներն դերը, որոնք ունեն լայն ազատություն և մեծ ազդեցություն՝ հասարակական գիտակցության վրա: Այս տեսակետից կարելի է ասել, որ մեղմ հակակոռուպցիոն քաղաքականությունն բավական արդյունավետ է:

Պետք նշել, որ կոշտ հակառուպցիոն քաղաքականությունը ոչ միշտ է ապահովում բավարար արդյունք: Դրա փայլուն օրինակ է Հինաստանը, որը, շարունակելով զբաղեցնել ոչ բարենպաստ դիրք (153 երկրների շարքում 83-րդ տեղը), կոռուպցիայի դեմ պայքարում չի կարողանում ապահովել էական առաջընթաց: Հետաքրքիր է, որ կոշտ հակառուպցիոն քաղաքականություն է վարում նաև Սինգապուրը, որը մտնում է կոռուպցիոն ցածր մակարդակով երկրների առաջին տասնյակ: Կա կարծիք, որ կոշտ հակառուպցիոն քաղաքականությունն ավելի արդյունավետ է փոքր երկրների համար:

Աղյուսակ 2.

Կոռուպցիան միջազգային գնահատականներում ` 2016 թ. դրությամբ

Երկրի դիրքը	Կոռուպցիայի գնահատականը /ինդեքսը /CPI2015/	Երկիրը	Համաշխարհային բանկ /CPIA/	Համաշխարհային տնտեսական ֆորում /EOS/	Բերթելսման հիմնադրամ /TI/	Համաշխարհային մրցունակության տարեգիրք /IMD/	Բերթելսման հիմնադրամ /SGI/	Համաշխարհային արդարադատության նախագիծ /ROL	Միջազգային երկրի դիսկի ուղեցույց ZPRS/	Economist Intelligence Unit	IHS Global Insight	Freedom House NIT	Աղբյուրների քանակը
<b>Զարգացած երկրների առաջին քսանյակը</b>													
1	91	Դանիա		89		96	97	88	98	88	83		7
2	90	Ֆինլանդիա		93		91	89	88	98	88	83		7
3	89	Շվեդիա		89		87	89	88	98	88	83		7
4	88	Նոր Զելանդիա		92		93	81	83	98	88	83		7
5	87	Նիդերլանդներ		84		85	97	85	89	88	83		7
5	87	Նորվեգիա		92		84	73	90	98	88	83		7
7	86	Շվեյցարիա		87		88	89		89	88	73		6
8	85	Սինգապուր		92	75	87		90	79	88	83		8
9	83	Կանադա		79		79	81	79	89	88	83		7
10	81	Գերմանիա		72		83	81	80	89	88	73		7
16	76	ԱՄՆ		69		74	89	74	79	88	73		8

Երկրի դիրքը	Կոռուպցիայի գնահատականը /ինդեքսը /CPI2015/	Երկիրը	Համաշխարհային բանկ /CPIA/	Համաշխարհային տնտեսական ֆորում /EOS/	Բերթելեման հիմնադրամ /TI/	Համաշխարհային մրցունակության տարեգիրք /IMD/	Բերթելեման հիմնադրամ /SGI/	Համաշխարհային արդարադատության նախագիծ /ROL	Միջազգային երկրի ռիսկի ուղեցույց ZPRS/	Economist Intelligence Unit	IHS Global Insight	Freedom House NIT	Աղբյուրների քանակը
<b>Զարգացող և անցումային երկրները</b>													
32	61	Իսրայել		64		56	65		60	71	52		6
48	52	Վրաստան		69	53			62			32	44	5
66	42	Թուրքի		53	45	42	41	33	41	38	42		8
69	41	Բուլղարիա		38	53	32	49	32	41	38	42	47	9
83	37	Չինաստան		49	36	39		28	31	38	32		8
<b>95</b>	<b>35</b>	<b>Հայաստան</b>		<b>45</b>	<b>28</b>				<b>31</b>		<b>32</b>	<b>37</b>	<b>5</b>
119	29	Ադրբեջան		37	23				21	38	32	21	6
119	29	Ռուսաստան		38	28	33		28	21	38	22	21	8

Աղբյուրները. աղյուսակի գլխամասում նշված 2016-2017թ.թ. միջազգային հրապարակումները, [https://www.transparency.org/news/feature/corruption\\_perceptions\\_index\\_2016](https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016)

\*Մշակումները կատարվել են հողվածի հեղինակի կողմից:

Գոյություն ունեն նաև հակակոռուպցիոն այլ ռազմավարություններ, մասնավորապես՝ կոռուպցիայի պատճառների վերացման համակարգային ռազմավարություն, «պատերազմի ռազմավարություն», գիտակցված պասիվության ռազմավարություն [7], որոնք արդյունավետորեն կիրառվում են՝ կախված երկրում ստեղծված իրավիճակից և ազգային անվտանգության խնդիրներից: Գլոբալ զարգացումների արդի պայմաններում, հակակոռուպցիոն ռազմավարություններում կոռուպցիան պետք է դիտվի որպես արտաքին ու ներքին սպառնալիք և ազգային անվտանգության լրջագույն հիմնախնդիր:

Միջազգային մակարդակում կոռուպցիայի դեմ պայքարը պետք է բխի համաշխարհային հասարակության անվտանգության ապահովման խնդիրներից և խարսխված լինի կազմակերպչական, քաղաքական, իրավական համալիր միջոցառումների վրա [1, էջ 65-73], որոնք են.

- կոռուպցիոն իրավախախտումների որակավորման միջազգային ստանդարտների մշակումը և դրանց հետևողական ներդրումը,
- թափանցիկության պահանջների մշակումը և համապատասխան մթնոլորտի ձևավորումը,
- հասարակական հակակոռուպցիոն տրամադրությունների ձևավորումը և հակակոռուպցիոն մթնոլորտի ապահովումը,
- կոռուպցիոն իրավախախտումներով պայմանավորված կորուստների փոխհատուցման և պատժելիության մթնոլորտի ապահովումը,
- կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալիզացիան և այլն:

Նշված նպատակներին հասնելու համար ընդունվել են մի շարք կոնվենցիաներ և գործում են բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Այստեղ շատ կարևոր է միջազգային մակարդակով հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման մասնակիցների համագործակցությունը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի հետևողականությունը:

**Կոռուպցիոն դրսևորումները և հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. ազգային անվտանգությունն այդ համատեքստում**

Կոռուպցիայի գոյությունը՝ որպես բարդ, բազմակողմ և բազմաշերտ երևույթ, պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Մեր երկրի համար կոռուպցիան պայմանավորող որոշիչ գործոն է համարվում պատմականորեն ձևավորված (արևելքի երկրներին բնորոշ վարքագծային նորմ, իսկ հետագայում սովետական շրջանում արմատակալած) «կոռուպցիոն մտածողությունը»: Իհարկե, կոռուպցիան հանդիսանում է ոչ միայն բացասական պատմական փորձի արդյունք: Ժամանակակից Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակին բն-

րոշ են կոռուպցիայի բավական ծանրակշիռ իրավական, ինստիտուցիոնալ, սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակույթային և այլ գործոններ (տե՛ս Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3**

**Կոռուպցիան պայմանավորող գործոնները ՀՀ-ում**

<b>Կոռուպցիան պայմանավորող գործոնները</b>	<b>Գործոնային բնորոշիչները</b>
<b>1. Կոռուպցիայից կախվածությունը և մրաժողությունը՝ որպես խորհրդային վաթ փորձի արդյունք</b>	
1.1. Կառավարման ուղղահայացը՝ սոցիալական հարաբերությունների համատարած պետականացման	<ul style="list-style-type: none"> <li>• ենթակաների լիազորությունների հստակ սահմանում վերադասի կողմից և դրանց խիստ վերահսկողություն,</li> <li>• կառավարման ներքին օղակների նախաձեռնության տեղափոխում «ստվեր», որտեղ ձևավորվում է այն գինը, որը, որպես վճար, տրվում է չթույլատրված գործողության դիմաց:</li> </ul>
1.2. հորիզոնական սոցիալական կապերի թերզարգացվածությունը	Չկայացած քաղաքացիական հասարակություն
1.3. Սովետական բաշխիչ համակարգի փորձը	Սովետական համոզմունքը, որ նյութական բարիքների հասանելիությունը որոշվում է ոչ այնքան աշխատանքային ջանքերով, որքան մարդու ունեցած դիրքով:
1.4. իշխանություն-ենթակա հարաբերությունների կազմակերպման ոչ իրավական հիմքերը	Իշխանական լիազորությունների իրացումը հաճախ բխում է ոչ թե իրավունքից, այլ իշխանության սուբյեկտիվ կամայականությունից. իշխանությունը շարունակում է մնալ ավելի բարձր, քան օրենքը:
<b>2. Արդի սոցիալ-քաղաքական իրավիճակով պայմանավորված գործոններ</b>	
2.1. Իրավական	Սոցիալական հարաբերությունները կարգավորող ոչ կատարյալ նորմատիվ հենքը, կոռուպցիան կանխող ոչ արդյունավետ համակարգը, բնակչության ցածր իրավական մշակույթը:
2.2. Ինստիտուցիոնալ	Կառավարման ոչ ռացիոնալ համակարգը, քավոր-սանիկային հարաբերությունները, իշխանության կենտրոնացվածությունը, ոչ լիարժեք անկախ դատական համակարգը:
2.3. Տնտեսական	Տնտեսական ոչ ռացիոնալ հարաբերությունները, անարդար մրցակցությունը, ստվերի աճը, ցածր հարկային մուտքերը և սոցիալական խնդիրները:



2.4.Սոցիալական	Քաղաքացիական հասարակության ցածր ակտիվությունը, ոչ լիարժեք տեղեկատվական ազատությունը, ՉԼՄ-ների թույլ դերը:
2.5.Քաղաքական	Անազնիվ քաղաքական մրցակցությունը, ժողովրդի անվստահությունը իշխանությունների նկատմամբ:
2.5.Մշակույթային	Քաղաքացիների վատ կազմակերպվածությունը և հասարակական պասիվությունը՝ տարաբնույթ կամայականությունների դեմ:

*\*Մշակումները կատարվել են հողվածի հեղինակի կողմից:*

Այսպիսով, կոռուպցիան ախտահարելով հասարակական կյանքի համարյա բոլոր ոլորտները, հանգեցնում է ազգային անվտանգության լուրջ խնդիրների:

Նման իրավիճակում արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությունը պայմանավորված է ոչ այնքան կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական միջոցառումներով, այլ այդ միջոցառումների կյանքի կոչման համար անհրաժեշտ նախապայմանների ապահովումով, մասնավորապես.

- պետական կառույցների հաշվետվողականության և թափանցիկության ապահովում,
- հակակոռուպցիոն քաղաքական փաստաթղթերի, օրենսդրական ու ենթօրենսդրական ակտերի ընդունում և իրական կյանքում դրանց արդյունավետ ներդրում,
- կոռուպցիայի դեմ պայքարում պետական իշխանության կողմից «քաղաքական կամքի» դրսևորում,
- երկրում բարոյա-հոգեբանական մթնոլորտի բարելավում,
- քաղաքացիական հասարակության զարգացման ապահովում,
- անկախ ՉԼՄ-ների համակարգի զարգացում,
- կրթական միջոցառումներ՝ ուղղված իրավական գրագիտության ապահովմանը և օրենքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը,
- պետության ու մասնավոր հատվածների և հասարակության սերտ համագործակցության ապահովումը և կոռուպցիայի դեմ պայքարի հետևողական իրականացումը:

Այստեղ կարևոր է կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկել որպես հասարակական-տնտեսական զարգացման կարևոր գերակայություն և Ազգային անվտանգության լուրջ բաղադրիչ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Ахметова Н.А.**, Международный опыт противодействия коррупции // Власть, 2009. № 12. С. 73-75.
2. Большая советская энциклопедия.Т.27, Большая советская энциклопедия, М.:Сов. Энциклопедия,1977, С. 94.
3. **Гоббс Т.**, Левиафан или материя, форма и власть государства церковного и гражданского / Т. Гоббс — М.: «Мир», 1936. , С. 229.
4. **Качкин А.В.**, Коррупция в современной России / А.В. Качкин, М: Институт Фонда «Общественное мнение», 2003., С. 196.
5. Конвенция Организации Объединенных Наций против коррупции, 31.10.2003, СПС «Консультант плюс»,
6. Международная коррупция и опыт борьбы с ней, Антикоррупционер, 2008, №1.
7. **Монатик Л. Ю.**, Сравнительный анализ стратегий борьбы с коррупцией.
8. **Сото де Э.**, Загадка капитала. Почему капитализм торжествует на Западе и терпит поражение во всем остальном мире, М.: Олимп Бизнес, 2001. С. 105.
9. **Brooks, R.C.**, Corruption in American politics and life. New York: Dodd, Mead and Co, 1910. [2nd ed. New York: Arno Press, 1974]
10. **Ford, H.J.**, Municipal corruption, Political Science Quarterly, 1904. Vol. 19. No. 4.
11. **Treisman, D.**, The of corruption: A cross-national study, Journal of Public Economics, 2000. Vol. 76. No. 3.
12. **Schneider, F., Enste, D.H.**, Shadow economies: Size, causes, and consequences, Journal of Economic Literature, 2000. Vol. 38. No. 1.
13. **Wilson, H.H.**, Congress: Corruption and compromise. New York: Rinehart, 1951.
14. **Wei, S.J.**, How taxing is corruption on international investors?, Review of Economics and Statistics. 2000. Vol. 82. No. 1.

**АМАЛЯ САРИБЕКЯН**

*ЕГУ, Профессор факультета экономики и менеджмента,  
советник секретаря Совета национальной безопасности  
при администрации Президента РА,  
кандидат экономических наук*

**КОРРУПЦИЯ КАК УГРОЗА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ:  
ЗАДАЧИ И ПОДХОДЫ АНТИКОРРУПЦИОННОЙ ПОЛИТИКИ**

Коррупция сегодня стала угрозой национальной и международной безопасности, что и обуславливает важность осознания борьбы против нее. Важным представляется постоянный анализ коррупции для беспрестанной корректировки и осуществления антикоррупционной политики. В условиях непрерывного роста угроз, определяемых коррупционными рисками, борьбу против коррупции необходимо рассматривать как важный компонент Национальной Безопасности.

**Ключевые слова:** коррупция, антикоррупционная политика, национальная безопасность, угроза национальной безопасности, коррупционный риск.

**AMALYA SARIBEKYAN**

*YSU, the Faculty of Economics and Management, Professor,  
Counselor of the Secretary of the National Security  
Council Office to the President of RA,  
PhD in Economics*

**CORRUPTION AS A THREAT TO NATIONAL SECURITY: TASKS AND  
APPROACHES TO ANTICORRUPTION POLICY**

Today, corruption has become a threat to national and international safety which determines the importance of realizing the struggle against it. The permanent analysis on corruption is essential for non-stop correction and implementation of anti-corruption policy. Under conditions of the continuous growth of the threats conditioned by corruption risks, the struggle against corruption is to be observed as an important component of National Security.

**Keywords:** corruption, anti-corruption policy, national security, threat to national security, anti-corruption strategy, corruption risks.